ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 88/1-Ա «08» 05 2024թ.

2024/2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության կարգի» 10-րդ կետը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. 2024/2025 ուսումնական տարվա առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել համաձայն հետևյալ ժամանակացույցի.

1) Առաջին փուլ.

ա.փաստաթղթերն ընդունել 2024թ. հունիսի 1-ից հունիսի 28-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2024թ. հուլիսի 2-ին,

գ. անվճար և վճարովի ուսուցման տեղերի համար մրցույթի արդյունքներն ամփոփել 2024թ. հուլիսի 4-ին,

դ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2024/2025 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսման վճարի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2024թ. հուլիսի 18-ը:

2) Երկրորդ փուլ.

ա. փաստաթղթերն ընդունել 2024թ. հուլիսի 8-ից օգոստոսի 16-ը՝ մինչև 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2024թ. օգոստոսի 22-ին և 23-ին,

գ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2024/2025 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսվարձի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2024թ. օգոստոսի 30-ը:

2. 2024/2025 ուսումնական տարվա **հեռակա** ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել համաձայն հետևյալ ժամանակացույցի.

ա. փաստաթղթերն ընդունել 2024թ. սեպտեմբերի 2-ից հոկտեմբերի 7-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2024թ. հոկտեմբերի 10-ին և 11-ին,

գ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2024/2025 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսման վճարի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2024թ. հոկտեմբերի 25-ը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ֆակուլտետներին/կենտրոններին/ինստիտուտներին:

Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան